

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԱՐՑԱԽՈՒՄ

(Փետրվար 19-20)

Ընդառաջելով Արցախի իշխանությունների հրավերին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը սույն թվականի փետրվարի 19-20-ը այցելեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն: Նորին Սրբությունը անձամբ մասնակցեց արցախահայության ազգային ազատագրական պայքարի 10-րդ տարեդարձին նվիրված միջոցառումներին և հանդիսություններին: Վեհափառ Հայրապետի շփխմբի մաս էին կազմում կրոնի գործերի պետական խորհրդի նախագահ Լազար Սուրջյանը, Հարավային Ռուսաստանի Հայոց Թեմի առաջնորդ Տ. Եզնիկ Եպս. Պետրոսյանը, Տ. Միհայել Մ. Վրդ. Աջապահյանը, Տ. Վրթանես Վրդ. Աբրահամյանը և Տ. Խորեն Արղ. Հովհաննեսիսյանը:

Արցախի հոգևորականները՝ գուլիս ունենալով Պարգև Սրբազանին, Լեռնային Ղարաբաղի իշխանությունների ներկայացուցիչների հետ Նորին Սուրբ Օծուքյանը դիմավորելով Շուշիի դարպասների մոտ, առաջնորդեցին դեպի Ստեփանակերտ: Նույն օրը, Մարտակերտի մշակույթի երիտասարդության պալատի դահլիճում տեղի ունեցավ հանդիսավոր նիստ: Նիստին մասնակցում էին Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Ա-ը, ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանը, Հայաստանից ժամանած պետական պատվիրակությունը նախագահությամբ պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանի, ինչպես նաև էյուրոբր Հայաստանից, Սփյուռքից և Ռուսաստանից: Բացման խոսքով հանդես եկավ ԼՂՀ-ի վարչապետ Լեռնարդ Պետրոսյանը: Այլևայլ ելույթներից հետո, նիստի եզրափակիչ խոսքը տրվեց Վեհափառ Հայրապետին: Նորին Սրբությունը ողջունելով ներկաներին և ոգեկոչելով արցախյան հերոսամարտի տասնամյակը՝ ի մասնավորի ասաց. «Ես չէի կարող այսօր մնալ էջմիածնում, երբ այստեղ իմ ժողովրդի զավակները տոնում են իրենց ազատ ու անկախ ապրելու աստվածատուր կամքի հաղթանակի տասնամյակը»:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՀԱՆԳԻՍԱՎՈՐ ՆԻՍՏԻՆ

Վսեմաշուք պարոն նախազահ, մեծարգո Արկադի Ղուկասյան Արցախի մեր Հանրապետության, սիրեցյալ բարեկամներ, Հոգևոր եղբայրներ, Հյուրեր և թանկագին Հայրենակից և արյունակից եղբայրներ և քույրեր Արցախի:

Ողջուն ձեզ ի խորոց սրտի: Այս ողջունը չի լինի ամբողջական, եթե այդ զա միայն իմ անձից: Իմ անձը շատ փոքր է այդ մեծ, այդ անպարփակելի ողջունին համար: Այդ ողջունը իմ տկար անձի միջից զայլս է մեր Հոգևոր ամենագոր կենտրոնից, մեր բոլորի, ողջ Հայության, որպես քրիստոնյա ազգ ծննդավայր Մայր Աթոռ Ս. Էջմիածնից, որը 1700 տարիներից ի վեր Աստուծո մարմնացումն է մեր Հայրենի Հողի վրա: Ես չէի կարող այսօր այնտեղ նստել, երբ այստեղ իմ ժողովրդի զավակները տոնում են իրենց ազատ և անկախ ապրելու աստվածատուր կամքի Հաղթանակի տասնամյակը: Եվ այդ

ինձ Համար կլինե՞ր մեր Եկեղեցու առաքելությանը անհամապատասխան վերաբերմունք, որովհետև մեր Եկեղեցին եղել է մեր ազգի Եկեղեցին, Հայ ժողովրդի Հոգու արտահայտությունը, Աստուծո թարգմանությունը մեր ժողովրդին և եղել ու կանգնել է միշտ այդ ազգը գոտեպնդող պետականության կողքին՝ լինի Հայաստանում, Արցախում, թե Սփյուռքում: Եվ ես իմ կոչումիս հավատարիմ գտնվելու համար այսօր եկա: Ես իմ Հոգու մեջ ձնկի եմ գալիս Աստուծո առջև և փառք տալիս Նրան, որ պարգևեց ինձ այս պահը՝ ապրելու ձեզ հետ աստվածատուր երջանկությունը:

Մերելիներ, մեր Եկեղեցին այսօր տոնում է Վարդանանց Հիշատակը: Ես տեսել եմ Տղմուտ գետը, ուր 451 թ. մղվեց «Վասն կրոնի, վասն ազատութեան և վասն Հայրենեաց» ճակատամարտը: Վարդանանց պատերազմը սկսվեց Ավարայրում, սակայն չվերջացավ Ավարայրով: Ժակատամարտը տանուկ տվեցին, սակայն 484 թ. Վահան Մամիկոնյանը հռչակեց ազատությունը և Նվարսակի դաշնագրով Հայությունը Վարդանանց գոյամարտի պսակումը գտավ: Ժակատամարտը տանուկ տվեցինք, սակայն պատերազմը շահեցինք: Սա է այն դասը, որ մենք այսօր քաղում ենք մեր Եկեղեցու խորհրդից, այն է Վարդանանց Հիշատակը, ոգին, գաղափարը, հավատքը վերակենդանացնող մեր ժողովրդի մեջ, Հայաստանի Հանրապետության, մեր Արցախի Հանրապետության, և հատկապես ազատագրական այն շարժման բերումով, որ արցախյան շարժումն է: Ես երեկ գիշեր հեռուստատեսությանը ողջ Հայությանը և արցախցիներին ուղղած իմ խոսքում ասացի, որ Արցախի ազատագրումը Հոգեկան վերաբխում Հանդիսացավ, կերպարանափոխում, պայծառակերպություն մեր ժողովրդի համար, վերագործոնք դարձավ մեր ժողովրդի մեջ: Եվ այսօր, ես եկել եմ շնորհավորելու ձեզ՝ այդ վերագործոնքի ուսկիրաներիդ: Բարեկամներ, մեր Եկեղեցին ձեր կողքին է երկու հիմնական պատճառներով.

Առաջին. քանզի Բրիտանի Եկեղեցին ազատության կրոնի քարոզիչն է: Աստված է տվել ձեզ ազատությունը, ոչ թե այս կամ այն անձը, պետությունը և կամ խմբակցությունը: Ազատությունը Հոգու բնատուր հատկանիշն է, Աստուծո կնիքն է, գրոշմը ձեզ վրա: Ինչպե՞ս մոռանամ ես իմ մայրիկի սովորեցրած երգը, ուր ասվում է.

«Ազատն Աստված այն օրից, երբ հանեցավ շունչ փչել.

Իմ հողանյութ շինվածքին կենդանություն պարգևել

Ես անբարբառ մի մանուկ երկու ձեռքս պարզեցի

Եվ իմ անգոր ձեռքերով ազատություն գրկեցի»:

Այդ ազատությունն է, որ դուք դրկեցիք, այդ դրկեցիք ձեր Հերոսների արյունով, այդ դրկում եք ձեր զավակների և ողջ Հայության շրջանության գործությամբ: Այսօր, սիրելիներ, միայն և միայն անցած տասը տարիների ձեր Հայրերի կտակածով Հպարտանալու առիթը չէ միայն: Երկու տեսակ Հերոսություն կա կյանքում՝ Հերոսություն արյամբ և Հերոսություն քրտամբ:

Հերոս են նրանք, ովքեր տալիս են իրենց գերագույնը՝ կյանքը: Արյան Հերոսներ են նրանք, անմահ Հերոսներ: Եվ ահավասիկ Արցախը մայրն է Հերոսների:

Երկրորդ. Հերոս են նաև նրանք, ովքեր դիտեն արժեքներ իրենց Հողը իրենց կյանքով, կապվել այդ Հողին և իրենց Հոգին դրոշմել այդ Հողի վրա: Եվ այդ Հերոսությունը կյանքի Հերոսությունն է՝ շարունակական, տևական և, երբեմն՝ նույնիսկ ավելի դժվար Հերոսություն, քան մեկ վայրկյանի



ՍԵՔՍՏԱՆԿԵՆՏԻ ՀՈՒՇԱՅԻՆԱՄԱԿՈՒՄ

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՀԱՆՐԱՀԱՎԱՔՈՒՄ

«Սիրեցյալ Հայրդէիք, այս պահին, արևի շողերի տակ, Աստուծո՛ւ նայվածքի ներքո ես իմ խոսքը ուղղելուց առաջ պարտք եմ զգում իմ խոսքը վերառաքել դեպի երկինք, դեպի Արարիչը տիեզերքի և Ստեղծիչը մարդկության:

Փառք Քեզ, Աստված, փառք Քեզ, որ տվեցիր մեր ժողովրդին ևս մեկ անգամ Քո ամենամեծ տուրքի վայելքը՝ ազատության և անկախության մեջ ապրելու շնորհքը: Փառք Քեզ, ով Տեր, որ 70 տարիների բռնակալության շղթաները կտրվեցին: Ո՛վ Տեր, տասնամյակներով քաղմապատկիր այս տասնամյակը՝ ազատ և անկախ ապրելու մեր արցախյան ժողովրդի, մեր Մայր Հայրենիքի, և ամբողջ Հայության ի սփյուռուս աշխարհի:

Եվ այժմ, տակավին խոսքերս շարունակելով, խնդրում եմ Աստծուց, ասելով և Հիշելով նրանց, ովքեր այս արևի տակ ապրում էին տասը տարիներ առաջ, շնչում էին մեզ նման, մեզ նման վայելում կյանքը, սակայն այժմ նրանց մարմինները հողի տակ են, բայց հոգիները աստղերի վերածված, Հսկում են մեզ և Հրճվում մեր հավատարմության այս շքեղ Հանդիսավորությամբ.

«Քրիստոս Աստուած մեր, անտխակալ և բարեգութ, դժայ քո արարչական սիրովդ ի հոգիս Հանգուցեալ ծառայից քոց, յիշեա Տէր մանաւանդ զհոգիսն քաջամարտիկ զաւակացն ազգիս Հայոց, որք ետուն զկեանս իւրեանց վասն Հաւատոյ, վասն Հայրենեաց և վասն ազատութեան և անկախութեան ժողովրդեանս մերոյ, արա արժանի ողորմութեան, քաւութեան և թողութեան մեղաց, դասաւորեա զնոսա ընդ սուրբս Քո յաջակողմեան դասուն, զի Դու ես Տէր և Արարիչ ամենեցուն, Դատաւոր կենդանեաց և մեռելոց և Քեզ վայել է փառք, իշխանութիւն և պատիւ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից, ամէն»:

Եվ այժմ, երկնքից երկիր նայելով, ողջունում եմ բոլորիդ՝ այստեղ Համախմբված կամ Արցախում, ձեր տներում ապրող ժողովրդին, և եթե երբեք ձայնիս ալիքները Հասնեն ողջ Հայաստանի մեր ժողովրդին և Միյուռքում ցիրուցանված Հայրդէիներին: Զգո՞ւմ եք բոլորդ այն, ինչ որ ես եմ զգում: Այսօր մենք չենք եկել այստեղ, որ պատմությունը Հիշենք, մխիթարվենք անցյալի հուշերով: Այսօր եկել ենք այստեղ ոչ թե պատմությունը Հիշելու, այլ պատմությունը կերտելու համար: Մեր ամբողջ ժողովուրդը, որտեղ էլ որ գտնվում է այս պահին, այնպես եմ զգում, որ Հայության աչքերը աշխարհի չորս կողմերից՝ արևելքից արևմուտք, Հարավից Հյուսիս, Հայաստանից մինչև Մայրազույն Արևելք, Միջին Արևելք, մինչև Եվրոպա, մինչև Հյուսիսային և Հարավային Ամերիկա, Հայության աչքերը նայում են այստեղ, այս սեռակետին, Արցախին, ձեզ և մեզ: Նայում են Հույսով, նայում են Հավատքով, միասնությամբ, մեր զորակցության առաքինությամբ, առանց որի մենք չենք կարող լինել ուժեղ: Մեր ուժը մենք ենք, և ինչպես ասվել է. «Մենք ենք, մեր սարերը»:

Ես էլ այստեղ ասում եմ, որ մենք ենք, մեր Հայրենիքը՝ և՛ Հայաստանում, և՛ Արցախում, և՛ ուր էլ որ գտնվենք:

Ես ցանկանում եմ, որ մենք այսօր ոչ թե միայն Հիշենք այն անձանց, ովքեր իրենց կյանքը տվեցին մեր կյանքի համար: Հիշենք այստեղ չգտնվող, սակայն սահմաններում գտնվող մեր քաջարի զինվորներին, ովքեր կանգնած են մեր կյանքի պաշտպանության համար. ապրե՛ք տղաներ, ապրե՛ք

աղջիկներ, որ ձեր կյանքն եք զոհում, որպեսզի ազգի կյանքը չվերջավորվի. այլ շարունակվի Հաղթականորեն:

Ես ողջունում եմ մեր բանակին, ես ողջունում եմ մեր ղեկավարներին, մեր նախագահին, վարչապետին, Ազգային ժողովի նախագահին, նախարարներին, բոլորին անխտիր, որ իմաստութեամբ և արիությանբ ղեկավարեն և ղգան իրենց կողքին Հայաստանյայց Սուրբ Եկեղեցին Մայր Աթոռ Ս. Էջմիածնով: Ես եկել եմ այն վայրից, ուր առաջին դաշինքը կնքվեց Աստուծո Հետ՝ Ս. Գր. Լուսավորչի և Տրդատ արքայի միացյալ ձեռքերով, երբ քրիստոնեությունը Հռչակվեց իբրև պետական կրոն: Այդ վայրկյանին Հռչակվեց ազատության գաղափարականի գերազանցությունը և անհաղթահարելիությունը, քանզի քրիստոնեությունը մարդու ազատությունը ամենաբարձրն է գնահատում: Ազատությունը Աստուծո տուրքն է, ոչ ոք այն մեզանից իրավունք չունի խլելու, և Հայց. Եկեղեցին այդ ճշմարտության քարոզիչն է:

Եվ ես ողջունում եմ մեր սիրելի Առաջնորդին, որ եղավ մեր ժողովրդի Հետ, եղավ մեր բանակի Հետ, միշտ բանակի Հաղթանակի Հույսը իր Հոգուց բխեցնելով, իր շուրթերից տարածելով մեր ժողովրդի կյանքում: Այսօր ես կարող էի երկարորեն խոսել, բայց ես ուզում եմ մեկ ուխտ կատարել և, որը թող լինի վերածննդյան ուխտը:

Տասը տարիներ առաջ այստեղ մեկ ուխտ կատարեցիք, ես այստեղ չէի, ես արտասահմանյան Հայ էի: Բայց կարող եք բացել թերթերը, մամուլը, գրքերը և կոնսնեք, թե այնտեղ ինչպես եմ ձեզ Հետ եղել՝ աղոթքով, խոսքով և գործով գորավիզ կանգնելով իմ երջանկահիշատակ նախորդին և անմոռանալի Վազգեն Կաթողիկոսին:

Այսօր ես եկել եմ այստեղ իբրև ձեր Հոգևոր Հայրը՝ Հրավիրելու Համար, որ մեկ անգամ ևս ուխտ կատարենք և, Հետևաբար, խնդրում եմ ձեզ, որ բարձրացնեք ձեր ձեռքերը և ասեք ինձ Հետ.

«Ներզվում եմ Հավատարիմ լինել Աստծուն, Հավատարիմ լինել նրա ազատ և անկախ ապրելու սրբազնասուրբ կամքին, Հավատարիմ լինել մեր Հայրերի սուրբ ավանդին, Հավատարիմ լինել մեր երեխաների ապագային և մեր կյանքով շենացնել Արցախը» և «Տէր լիցի ընդ ձեզ ընդ ամենեսեանդ, ամէն»:

Հանրահավաքի ավարտին Հայոց Հայրապետը և Արկադի Ղուկասյանը, ընկերակցությամբ հոգևոր դասի և պետական ավագանու, ծաղկեպսակների գիտելիցին Սոսիամանկերտի հուշահամալիրում, հարգանքի տուրք մատուցելով և հավերժացնելով ցանատակների հիշատակը:

Օրվա երկրորդ կեսին Գարեգին Ա Կաթողիկոսը ներկա եղավ Արցախի նախագահի կողմից կազմակերպված ընդունելությանը, որից հետո վեհափառ Հայրապետն իր շխախտով ուղևորվեց դեպի պատմական Շուշի: Ղազանչեցոց Ամենափրկիչ եկեղեցում նորին Սրբությունը փառք և գոհունակություն ընծայեց Բարձրյալ Աստծուն արցախյան նվաճումների ու խաղաղության համար: Ապա, իր պատգամը տալով ներկա հավատացյալներին, օրհնեց Արցախ աշխարհն ու արցախցիներին:

Այսպիսով, վեհափառ Հայրապետը, ավարտելով իր շնորհաբեր այցելությունը Արցախ, վերադարձավ Ս. Էջմիածին: